

ՆԿԻՐԱԳՈՐԾՄԱՆ ԲՆԱԿԱԶՄԱԿԱՆ ՑՈՒՑԻՉՆԵՐԸ ՀԱՅ
ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՀԵՔԻԱԹՆԵՐՈՒՄ

ԹԱՄԱՐ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

Հայ ժողովրդական հեքիաթներում բազմաթիվ տեղեկություններ կան թանկարժեք մետաղների, քարերի, հանքանյութերի, թալիսման-հմայիլների ղալխիչ-հմայական հատկությունների մասին¹: Թանկարժեք քարերը ծառայում են նաև իբրև ծիսապաշտամունքային հաղորդություն արտահայտություններ² և խորհրդանշում են ազգագրական և բանահյուսական միջավայրին բնորոշ ամուսնական ծիսաշարի այն փորձությունները, որոնք առնչվում են օրգանական ծագմամբ ցուցիչների մարգարիտ, սադափ (գաղտակուր), մարջան (բուստ, կորալ) հմայական-պաշտպանական հատկությունների հետ:

Թագավորի որդուն մոլորեցնելու, նրա ընտրյալին պատուհասելու և «հուրի-փերու» տեղը դավադրաբար նվաճելու հայտնի դիպաշարը որոշ հեքիաթներում հանգուցալուծվում է մարդարտի վերոհիշյալ գործառույթով: «Շարի մարգարիտ» (Տուրուբեբան-Հարթ) հեքիաթում³, որը Վասպուրական-Վան ազգագրական շրջանում գրառված «Մարգարիտ շար»⁴ և «Մարգարտաշար»⁵ հեքիաթների տարբերակն է, «բոշի գյաճկեն» (թափառական գնչուհին) մոտալուստ վտանգը կանխելու նպատակով հրաժարվում է մարգարտաշար շապկից և իր զոհին պարտագրում անհապաղ հեռանալ. «Մի շարա, մի շարա, ես չխագնիմ»⁶: Իսկ մարգարիտների գորուծյամբ

¹ Արիստոտելի և նրա աշակերտ Թեոփրաստի (մ. թ. ա. 327-287 թթ.), Հիպոկրատի (մ. թ. ա. 460-377 թթ.), Պլինիոս Ավագի (23-79 թթ.), Ալիցեննայի (980-1037 թթ.), Պարացելսի (1493-1541 թթ.), Աբու Խայհան Բիրունու (XI դ.), Մխիթար Հերացու (XII դ.), Ամիրգովյաթ Ամասիացու (XV դ.), Առաքել Դավրիժեցու (XVII դ.) և այլոց աշխատություններում պահպանվել են հանձնարարականներ մետաղների ու քարերի մոդական ուժի և դրանցից պատրաստված նյութերի դարմանող հատկությունների վերաբերյալ: Հինավուրց սլավոնական բժշկարանները, տիբեթյան բժշկության «Բանդուրյա օբնո», «Չժու Շի» աշխատությունները, «Սու Ջոկ» բուժման մեթոդները ևս վկայում են, որ բնական քարերը, հանքանյութերն ու մետաղներն իրենց մեջ խտացնում են տիեզերքի խորհրդավոր, առեղծվածային ուժերը, օժտված են չար ոգիներին հեռացնելու, զանազան հիվանդություններ բուժելու, երջանկություն և բարեկեցություն պարգևելու ունակություններ: Այդ մասին մանրամասն տես՝ Կ. Ս. Պատկանյան. Драгоценные камни, их названия и свойства по понятиям армян в XVII веке. Ереван, 1979, с. 54-57; Ա. Միլեր-մեան. Պատմություն Հալէպի հայոց. Կ. Յ. Փարիզ, 1950, էջ 129-133: Абу-р-Райхан Мухаммед ибн Ахмад ал-Бируни. Собрание сведений для познания драгоценностей (минералогия). М., 1963, с. 92-151; I. V. Gernan. Lithotherapy. Ancient Experience. Application of Minerals in Onnuri Medicine – «Onnuri medicine», М., № 8, 2001, p. 65.

² В. Андриева. Энциклопедия символов, знаков, эмблем. М., 2000, с. 227.

³ Հայ ժողովրդական հեքիաթներ (այսուհետև՝ ՀԺՀ). Կ. 11, Երևան, 1980, էջ 323:

⁴ ՀԺՀ, Կ. 14, Երևան, 1999, էջ 507:

⁵ Էմինեան ազգագրական ժողովածու (այսուհետև՝ ԷԱԺ), Կ. Բ, Մոսկուա-Վաղարշապատ, ԽՅԾ-1901, էջ 432-442:

⁶ ՀԺՀ, Կ. 11, էջ 330:

անպատկառ. խափշիկին դիմակազերծած թագավորի որդին պահանջում է, որ իր ընտրյալը շարունակի շարել մարգարիտները. «Թոր թր շարա, ես կխագնիմ, դու մի խաղի»⁷:

Մարգարիտն ու մարջանն անխափան կարող են շարել միայն «խուռնիկ - խրեղեն հուրիմալաքները»: «Իլիքի մրջան» հեքիաթում թագավորի տղան ուլունք շարող աղջիկներին մի-մի մատնոց մարջան է տալիս, իսկ Հուրի - Մալաքի դոգը լցնում է «գաբո մը հրյու»⁸: Այդ մոգական քարերը բոլորի մատներին չէ, որ ենթարկվում են. «Կտեսի ախչիկներ խալու խալի-չի վրեն նստուկ են, մարգրտե շապիկ կշարին, դեմի կշարին, դեմի կքանգ-վի»⁹: Իսկ «Մարգարիտ շար» հեքիաթում «Աղջիկը մարգը յրիտ կլցի առջև, արփշմե թելերը կօլորի, շողշողուն մատներով որ կշարի խետն էլ անուշ-անուշ խաղեր կասի. ուր գլխով գյացածները զըմեն խաղով կասի.

Մարդը յրիտ, դե շար, դե շար, Հալբու պաշար,

Աստված, տյու ձիկ արա մեկ ճար:

Աղջիկը թե մեկ ուր ձեռներով կշարեր մարգը յրիտները, տասնմեկ էլ ի-րանց-իրանց կշարվին»¹⁰:

Հայ ժողովրդական հեքիաթներում անառարկելի է մարգարտի ու մարջանի ծիսահամայական նշանակությունը: Եթե վերոհիշյալ դիպաշարերում առանցքային ցուցիչը մարգարիտն է, ապա նույն դիպաշարի «Իլիքի մրջան» տարբերակում՝ մարջանը: Հեքիաթը կառուցված է նվիրագործվողին խորհրդանշող «մարջան ուլունքի» մոգական հատկությունների վրա: Մարջանի ծիսական ներքնիմաստը, որ թափանցել է հեքիաթի գաղտնալեզվի մեջ, հենց այդպես էլ կոչվում է սըռ (գաղտնիք), որն առանց ընդմիջարկման կրկնվում է հեքիաթի ամփոփող 96 չափածո տողերում.

«Իմ պապ աշխարք պտտեց

Իլիքի մրջան սըռ:

Էտ ապրնջան մեկի ձեռնով չէղավ,

Իլիքի մրջան սըռ:

Էղավ իմ ձեռնով, իլիքի մրջան սըռ:

Ես էցկեցի իմ ձեռ, իլիքի մրջան սըռ» և այլն¹¹:

⁷ Նույն տեղում: Հնում մարգարտաշար կարը արվեստի աստիճանի էր հասցված և համարվում էր աստվածատուր շնորհ (տե՛ս Н. В. Белов. Все о камнях и амулетах от А до Я. МІНСК, 2002, с. 146): «Աստղեր» լուծման առարկայով «Մին տափուրիկ (փայտե սկուտեղ) մարգարիտ, հունար ունես հըմբարիբ» հանելուկը մարգարիտներ համբերու կամ շարելու առանձնաշնորհի տիպիկ բանահյուսական արձագանք է (Ս. Հ ա - ռ ու թ յ ու ն յ ա ն. Հայ ժողովրդական հանելուկներ, Երևան, 1965, էջ 9): Նույնն առկա է նաև Լոռվա «Դանդան»-ներում. «Իմ աղջիկս բշարող ա, մանր ուլունք շարող ա» (Ե. Լ ա յ ա յ ա ն. Երկեր, հ. 3, Երևան, 2004, էջ 263):

⁸ ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի ընտանիքային արխիվ (այսուհետև՝ ԲԱ), Ե. Լալայանի ֆոնդ, ԲԱ IV, 3895-3948:

⁹ ՀԺՀ, հ. 11, էջ 330:

¹⁰ ՀԺՀ, հ. 14, էջ 511:

¹¹ ԲԱ, Ե. Լալայանի ֆոնդ, ԲԱ IV, 3895-3948: Հեքիաթի դիպաշարը աղբյուրներ ունի Հայ ժողովրդական ավանդույթի հետ, որտեղ նույնպես ամուսինը որոնում է նրան, ում ձեռքին կգա իր հանգուցյալ կնոջ ապարանջանը: Ջանքերն ապարգյուն են անցնում: «Պարգ-վում է, որ ապարանջանն իսկն իր աղջկա ձեռքով է: Հայրը վճռում է ընտելթյամբ նրան իր կինը դարձնել (Հ. Խ ա ո ա տ յ ա ն - Ա ո ա ք ե լ յ ա ն. Հայ ժողովրդական տոները. Երևան, 2000, էջ 53): Սակայն եթե ավանդույթյան մեջ աղջկա նետած փոխինձից փոթորիկ

Յուզանչական է, որ «Մարգարտաշար»¹⁵ հեքիաթը ևս ավարտվում է չափածո վերջերգով (105 տող)՝ յուրաքանչյուր տողավերջում «մարգարտաշար» բառակապակցով թյամբ ընդգծելով մարգարտի խորհրդագործական հատկությունը:

«Բըլել աղջիկ» հեքիաթի հերոսուհու նորածին աղջիկն ու տղան (մարգարտե ատամներով, մրահոն, գեղձուն ծամերով, բարակ մեջքով) նվիրագործական իրադրություն համատեքստում փորձություն են ենթարկվում ի սկզբանե: Չար մորաքույրների կողմից սնդուկով ջուրը նետվելուց հետո նորածինները գուրս են գալիս այսրաշխարհ: Նրանց վերածնունդը հարաբերվում է մութ ու լույս աշխարհ ճանապարհի հաղթահարման հետ¹⁶. «Բացեց դուրին, հայավ օ էրկու հատ չուճուխ, օր ինճե-տիչլի (մարգարտե ատամ), սըրմա սաչլի, դալեմ-դաչլի, ինճե-պեյլու: Լոսը զարկեր դուրին մեջ, այնքան օ սիրուն են՝ մի աղջիկ, մի տղա»¹⁷:

Մեկ այլ «Գորտ» վերնագրով հեքիաթում¹⁸, թագավորի կրտսեր որդու արձակած նետից պատուվում է գորտի պատյանը, ինչի մեջ տեղավորված աղջկա «ըղընգվընին օսկի էր, արղընին մարգարիտ» (եղունգները ոսկի էին, ատամները մարգարիտ): Իսկ «Որսորդ Հայրապետ» հեքիաթում¹⁹ անզավակ ծեր թագավորը կարող է որդի ունենալ և իր «աշխարքը պայպանել», եթե ամուսնանա Հնդիստանի թագավորի մարգարտե ատամներով աղջկա հետ. «Ամա քիղի աղջիկ կըսիմ, հա՛, ինճի տիչլի»¹⁷: Հետաքրքիր է նկատել, որ Բորչալուի գավառի աշուղական երգերի նմուշներից մեկում «գյոգալի» ատամները գովերգող մարգարտե մակդիրի փոխարեն գործածվում է՝ «ինջի»:

Ատամ գ ինջի, պոռոզ գ մերջան,
Ում սեր չի տվիր, կրակվեց նրա ջան¹⁸:

Չարսանճագի բարբառով պատմված «Գորտ» հեքիաթում¹⁹ էլ, երբ աղջիկն իր մարգարտե թասերից մեկը տալիս է սուլթանի (թագավորի կնոջ)

է բարձրանում և կուրացնում հորը, իսկ աղջիկը փրկվում է՝ նստելով իրեն օգնության հասած Սուրբ Սարգսի ձիու գավակին, ապա հեքիաթում աղջիկը մի թաքնե (անգուկ) է պատրաստել տալիս, մտնում մեջը և պատվիրում իրեն նետել վանա ծովը: Մնգուկը գտնում է թագավորի որդին, և նրանք երկուստեք հաղթահարում են նվիրագործման խորհրդածեսի փորձությունները:

¹⁵ ԷԱԺ, հ. Բ, էջ 437-442:

¹³ Յայտը ժողովրդախոսակցական լեզվում ծննդաբերություն բառը հաջողությամբ փոխարինվում է ազատվել բայի ծիսաառասպելական նրբիմաստով:

¹⁴ ԷԱԺ, հ. Բ, էջ 166:

¹⁵ Նույն տեղում, էջ 198-216:

¹⁶ Նույն տեղում, էջ 257-267:

¹⁷ Նույն տեղում, էջ 260:

¹⁸ Ե. Լ ա լ ա յ ա ն. նշվ. աշխ., հ. 3, էջ 316: Անի քաղաքից հայտնի XIII դ. վերաբերող մի արձանագրության մեջ Ն. Մառի կողմից չթարգմանված «ХАСИНАЖ» (խասինջու, ինջու) բառն իր առաջին խաս (արաբ.) և երկրորդ ինջու (մոնղոլ.) բաղադրիչներով, ամենայն հավանականությամբ, բնութագրում է Անի քաղաքն իբրև ընտիր մարգարիտ (Н. М а р р. Новые материалы по армянской эпиграфике. — Отдельный оттиск из "Записок восточного отделения императорского русского археологического общества", т. VIII, СПб., 1893, с. 77—80):

¹⁹ ԷԱԺ, հ. Բ, էջ 198-216:

ձեռքը, որ իր վրա ջուր լցնի, հենց նույն պահին սուլթանի որդին, գորտի շապկի հոտն առնելով, այն նետում է կրակը: «Կեցի՛ր, էալ մի՛ լեցնեք, տղադ իմ տունը աւրեց», – ասում է աղջիկը, մարգարտե թասն առնում, կերպարանափոխվում աղավնու և «Համամի» (բաղնիք) պատուհանից դուրս է թռչում. «Թագաւորի՛ տղա՛, իմ տեղը եօթ տարուայ ճամփայ է... Աղջիկը «մնըս բարի» ըսրց, փուլանմիշ եղաւ փէնճէրէէն, Հայտէ գնըց»²⁰: Մարգարտե թասով լցվելիք ջուրը երկու աշխարհների սահմանագիծ «փէնճէրէից» այն կողմ տղային մղում է Լսկիրագործման փորձությունները հորձանուտը:

Մարգարտի հմայական-պաշտպանական, խորհրդագործական դործառույթը պահպանվում է Հայաստանի պատմաղագրական տարբեր շրջաններից գրառված այլ հեքիաթների դիպաշարերում ևս: «Մախոխի հեքիաթում»²¹ ավադ ու միջնեկ քույրերին շամփրելով «սեհրբազր» (կախարդ) նրանց կախում է օճորքից, իսկ մարգարտե շապկով կրտսեր քույրն արկղով (ղուծի) ընկղմվում է ծովը և նախամուսնական խորհրդածեսի փորձությունները հաղթահարելով դառնում է թագավորի որդու կինը: «Առչի տղի նաղլում» սատանի քամին շրջանցելու նպատակով Ծամթելն իր «մարքարտե շապկը» հանում է ու տալիս ամուսնուն²²:

Մեկ այլ հեքիաթում հորթարածը «զմարգըրտե շապկի» գորությամբ է գտնում կնոջը՝ Մարա թագավորի աղջկան²³: «Արաբու պոկոչից» (թուխ թանձրաշուրթ) ծնված երեխայի («էսա տղէն խալալ սիրոյ պտուղ չի») տեական լացը կարողանում է դադարեցնել միայն թագավորի որդու՝ աչքերից մարգարտե թափող հարսնացուն²⁴:

«Միսո» հեքիաթում չանսալով աղավնու խնդրանքին՝ հերոսը ոչ միայն չի վերադարձնում փետուրները, այլև ամուսնանում է նրա հետ. «Մե ձեռքմ լավ մարգրիտներով կարած հալավմ բերի, ասոր հագցուցի, տարա տուն»²⁵:

Հնագույն սլատկերացումների համաձայն, մարգարտե արգասավորություն խորհրդանշող իգական ցուցիչ է²⁶: Հայ մատենագրության մեջ ևս տեղեկություններ կան մարգարտի և սազափի²⁷ (գաղտակուր) իգական ծագման («սերմն քանց ձկան կու ձգէ ծովն, սազաֆն էլ նորա սերմանէն

²⁰ Նույն անդում, էջ 204-205:

²¹ ՀԺՀ, հ. 2, Երևան, 1959, էջ 356:

²² ՀԺՀ, հ. 1, Երևան, 1959, էջ 154:

²³ ՀԺՀ, հ. 10, Երևան, 1967, էջ 59:

²⁴ ԷԱԺ, հ. Բ, էջ 440-441:

²⁵ ՀԺՀ, հ. 4, Երևան, 1963, էջ 412:

²⁶ М. Э л и а д е. Азиатская алхимия. М., 1998, с. 48.

²⁷ Արևադարձային ջրերում երկու-երեք տասնյակ մետր խորության տակ ապրում են մինչև 8 սմ չափսեր ունեցող փափկամորթ խխունջներ, որոնց մարմնի և խեցու միջև ընկած անհանգստացնող ավազահատիկի շուրջը մարգարտի է գոյանում: Մարգարտի չափերը տարբեր են լինում՝ սիսեռից մինչև կաղինի մեծության: Մարգարտն իր կազմությամբ նույնն է, ինչ որ սազափը: «Սատափ (սատաֆ) – գաղտակրայ, մարգարտի խեցի, սէտէֆ» (Հ. ր. Ա ճ ա ո յ ա ն. Հայերեն արմատական բառարան. հ. Դ, Երևան, 1979, էջ 180): Աշխարհում ամենամեծ մարգարտահատիկը՝ վեց ու կես կգ կշռով, ցուցադրվում է Նյու Յորքում: Այն գտնվել է 1934 թ. Ֆիլիպինյան կղզիների մոտ (Խաղաղ օվկիանոս): Այդ հսկա մարգարտը որսած սուղորդը դարձել է իր իսկ գտածոյի զոհը. նրան գտել են խեղզիված՝ ձեռքը տրիգակնա կոչվող խխունջի պատյանի մեջ (Н. В. Б е л о в. Նշվ. աշխ., էջ 145-146):

Հասլ կու լինի») և աստվածային («ողջանայ Աստուծով») հատկությունների մասին²⁸: Վիպական երգում տեղացող ոսկե ու մարգարտե անձրևը վերոհիշյալ պատկերացումների դիցաբանական արձագանքն է²⁹: Հայկական հեքիաթներում հերոսները հազվադեպ են անուն ունենում, սակայն Տուրուբերան – Մուշից գրառված հեքիաթներից մեկը կոչվում է «Պառավ Մարգարիտ»³⁰, ինչը ևս վկայում է Հայոց մեջ սիրված «Մարգարիտ» անձնանվան իգական սկզբի մասին:

Հնում հավատում էին, որ իրենց խղճի հետ գործարք կնքող, շողոմ և ստորաբարչ մարդկանց վրա մարգարիտը փայլատում ու խամրում է: Այն համարվում էր մարդու գործած արարքների ու խղճի յուրօրինակ դատավոր, բացառիկ ընտրյալի սիրո և հավատարմության երաշխավոր: Իր մեջ կրելով լուսնի բացասական ուժը՝ մարգարիտը կարող է պատժել չարագործին՝ մատնելով նրան անհուսուլթյան³¹, ինչին և ականատես ենք լինում հայկական հեքիաթների վերոհիշյալ դիպաշարում: Ծովախիսուցների հմայական հատկությունների մասին պերճախոս տեղեկություն է հաղորդում իտրենացին՝ վկայակոչելով ասորական և հայկական ավանդությունը՝ Շամիրամի հուռուլթների մասին «Ուլունք Շամիրամայ ի ծով»³²: Դյուլթական հատկությամբ օժտված հուռուլթ(ք)ների մասին արձագանքներ են պահպանվել նաև ուշ շրջանի Հայ դրականության մեջ³³:

Տարբեր ժողովուրդների ավանդույթներում տարիքային մի խմբից մյուսն անցնելը, առավել ևս ամուսնությունը, ուղեկցվել է եռամսան ինիցիացիայի ծեսով³⁴, լատիններեն «initiatio» նվիրագործում բառից լքնակա-

²⁸ Ա. Դ ա լ ը ի ժ ե ց ի. Գիրք պատմութեանց (այսուհետև՝ Ա. Դ ա լ ը ի ժ ե ց ի). (աշխատասիրությունք Լ. Ա. Խանլարյանի). Երևան, 1990, էջ 453:

²⁹ «Տեղ ոսկի տեղայր /ի փեսայութեանն Արտաշիսի/ Տեղայր մարգարիտ /ի Հարսնութեան Սաթինկանն» (Մովսիսի իտրենացու պատմություն հայոց (քննական բնագիրը Մ. Աբեղյանի և Ս. Հարությունյանի, աշխատասիրությունք Ստ. Մալխասյանի). ՈՄ, Երևան, 1981, էջ 214): «Ալագյազի մանիներ» պոեմում այլ երիտասարդի կողմից «իր յարի վզին մարգարիտ մանյակ կախելու» երազը պատանու համար հավասարագոր է սիրած էակին հասնելու հույսի տարակայություն. «Տղան մարգարիտ մանյակ ուներ / Յարիս վզին կախ արավ / Արդյոք չրյնր, շորեր հովե ր / Իմ եղնիկին յար արավ» (Ա. վ. Ի ս ա հ ա կ յ ա ն. Երկերի ժողովածու վեց հատորով. հ. 2, Երևան, 1974, էջ 49): Հարավային Աֆրիկայի սուտոցեղում ևս բնիկները մարգարիտը համարում են «ամուսնության քար» (տես՝ Ա. Դ ը ի ձ ո, Լ. Մ ի ն ց. Մարդիկ և սովորություններ. Երևան, 1987, էջ 113):

³⁰ Հ ժ շ, հ. 12, Երևան, 1984, էջ 34:

³¹ Н. В. Белов. Եղվ. աշխ., էջ 147-148:

³² Մովսիսի իտրենացու պատմություն հայոց. ԺԸ, էջ 70: Ժողովրդական բանավոր զրույցը ոչ միայն բացատրում է հուռուլթների խեցի լինելը, այլև մատնանշում դրանց, իրոք, ծովային ծագումը: Հուռուլթի ծովախիսուց լինելու պարագան վկայում է Հայերենում պահպանված նրա «որոճ» (հոգնակի՝ «որոճիք») հոմանիշի ստուգաբանությունը հայերենի արմատական բառարանում՝ «ուլունքի նման խեցամորթ». (տես՝ Ա Փ ի լ ի պ ո ս յ ա ն. Հայկական լեռնաշխարհը Մերձավոր Արևելքի պատմա-մշակութային փոխառնությունների ոլորտում (մ. թ. ա. III-I հազարամյակներ), գոկտ. առ., Երևան, 2004, էջ 38):

³³ Հուռուլթի՝ (ուլինս ուլթել) իբրև չարագուլթ բժժանքի մասին տե՛ս Տեառն Հովհաննու Մանգակունու Հայոց Հայրապետի ճառք. Վենետիկ, 1860, էջ 191: «Մինն ասեց Սոսի վրա թլսիմ (հուռուլթք) կա. մինն ասեց սուրբ Կարապետու պատն ա պահել, նա ա տվել, մեկելը թե սուրբ Գևորգն էլ շատ ա գնում, ամեն շաբաթ մում ա վառում նրա սիրու, նրա շնորհքն ա» (Պ. Պ ո ո շ յ ա ն. Սոս և Վարդիթեր. Երկեր. Երևան, 1982, էջ 366):

³⁴ Г. Л е в и н т о н. Инициация и мифы. — "Мифы народов мира" (далее — МНМ), т. 1, М., 1991, с. 543. Վաղնջական հասարակություններում տարածված արբուլքի նվիրագործման ծիսական արարողության մասին տե՛ս Ա. Հ ա ը ո լ թ յ ո լ ն յ ա ն. Արբուլքի նվիրագործման ծիսական մի արարողության գրսևորում Դավթի

տեղից օտարում, փորձության ենթարկում (մահ), ծիսական լվացում (վերածնունդ)՝

Աարնե-Թումփսոնի համացույցի «ժողովրդական հեքիաթների տիպերի»³⁵ 433 համարին համապատասխանող հայկական հեքիաթներում օձին կեր դառնալուց առաջ աղջիկն այցի է դնում մոր գերեղմանին և աղի արցունք թափելով քնում այնտեղ: Քնելը, հարբելը, թունավորվելը, տեսողության և գիտակցության կորուստը, մահը վերածնվելու պայմանով, հեքիաթներում հավասարազոր են բնակատեղից օտարման (նվիրագործման առաջին փուլ)³⁶: Վերոհիշյալ ծեսի երկրորդ փորձության փուլն աղջիկը հաղթահարում է բանաձևային հմայախոսքով («Օձիկ-մօձիկ, ճլպլտուն օձիկ, խան քյո օձեղեն շապիկդ, որ ես էլ խանեմ իմ ոգնեղեն շապիկդ», «Հէնե շարէշար շապիկդ, ուր հէնիմ ապայէ լաթերս»)³⁷ և այլն: Բարկացած (երբեմն անզգուշաբար) օձը պոչով խփում-գցում է աղջկա մեկ կամ մի քանի ատամները՝ տեղադրելով մարգարիտ կամ սադափ³⁸:

Հայաստանի ազգագրական տարբեր մարզերից դրառած նույն գրպաշարի փոփոխականներից մեկում աղջկա օտարած ատամի փոխարեն տեղադրվում է անգին քար³⁹, իսկ երկու այլ փոփոխականներում՝ արծաթ⁴⁰ և ոսկի⁴¹: Դիցաբանական համակարգում թե՛ վերոհիշյալ բնակազմությունները (մարգարիտ, սադափ, անգին քար) և թե՛ երկրաբանական գոյացությունները (ոսկի, արծաթ) իմաստավորվում են իբրև արարողակարգված խորհրդանշային ցուցիչներ և ծառայում են որոշակի գաղափարի առարկայացմանը: Ի վերջո, այդ ցուցիչների շնորհիվ է ամուսինը գտնում խորթ մոր կողմից հանրավի պատուհասված իր ընտրյալին և հետամուսնական փորձությունն ավարտվում է ծիսական լվացումով առաջին երեխայի ծննդով և ամուսնացած կնոջ կարգավիճակի ամրապնդումով:

վեպում. — Հայ ժողովրդական մշակույթ, X գեկուցումների հիմնադրույթներ, Երևան, 1999, էջ 44-47:

³⁵ Ձեռագիրը՝ ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտում (դործավարական թարգմանություն):

³⁶ Հնագույն պատկերացումների համաձայն՝ մահն ընկալվել է իբրև քուն, իսկ քունը՝ միջանկյալ մահ, որոնց հետքերը ժամանակակից հայերենում պահպանվել են հանգուցյալների տրվող «ննջեցյալ» անվան մեջ. այս մասին մանրամասն տես՝ Ա. Հ ա ռ ու թ - յ ու ն յ ա ն. Մահվան պատկերացումները հայկական անեծքներում. — ՀԽՍՀ ԳԱ «Լրաբեր հասարակական գիտությունների», Երևան, 1985, № 12, էջ 55:

³⁷ ՀժՀ, հ. 14, էջ 514, Տ. Վ. Պ ա լ ե ա ն. Օձամանուկ և Արևմանուկ. — «Բիւրակն», Կ. Պոլիս, 1898, № 47-49, էջ 827:

³⁸ ՀժՀ, հ. 14, էջ 514, 516, ՀժՀ, հ. 6, Երևան, 1973, էջ 80: Ավստրալիական մայրցամաքի հարավում մուլթ, հատուկ պատրաստված խրճիթում կայծքարով կամ խեցուկտորով աղջկա մեջքին կտածում էին բարդ նախշ կամ ջարդում էին ատամը: «Քննություն հանձնած» աղջիկը համարվում էր չափահաս և նրանց տուն կարելի էր հարսնախոսության դնալ (տես՝ Ա. Դ Ր Ի Ճ Ո, Լ. Մ Ի Ն Գ. Նշվ. աշխ., էջ 93-94): Ակնհայտ է AT433 տիպին պատկանող հայկական հրաշապատում հեքիաթների գրպաշարերի ծագումը նվիրագործման ծեսերից:

³⁹ ՀժՀ, հ. 3, Երևան, 1962, էջ 177:

⁴⁰ ՀժՀ, հ. 2, էջ 358, Գ. Ս Ր Վ Ա Ն Ճ Տ Յ Ա Ն Գ. Երկեր. հ. 1, Երևան, 1978, էջ 491: Գ. Սրվանձառյանցի գրառման մեջ Օձեմանուկը արծաթե ատամ է դնում աղջկա ընկած ատամի փոխարեն (էջ 491), սակայն նրան ճանաչում է ոսկե ատամից (էջ 495): Այս անհամապատասխանությունը, հավանաբար, ասացողի շփոթության հետևանք է, իսկ «Մախոխի հեքիաթում» օձին փոխարինում է «սեհրբազը» և կնոջ գիմացի երկու ատամները քաշելով՝ տեղադրում է արծաթե ատամներ (ՀժՀ, հ. 2, էջ 358):

⁴¹ ՀժՀ, հ. 9, Երևան, 1968, էջ 263: Ոսկու և արծաթի իբրև արական և իգական սկիզբները աշխարհում մետաղների մասին տես՝ Н. В. Белов. Նշվ. աշխ., էջ 148-314:

Մարգարիտն ու սաղափն իրենց ֆիզիկական և ասաղագուշական հատկություններով համապատասխանում են նվիրագործման ծեսին ենթարկված աղջիկների՝ քաշած ատամներին փոխարինելու ծիսաբանահյուսական պատկերացումներին, մանավանդ որ վերոհիշյալ «քարերի» բնակազմական (կենդանական) ծագումն ևս համապատասխանում է ատամի՝ իբրև աճող ոսկրային գոյացության գործառույթին:

Ջուղահայ գաղութից մեզ հասած «Եալալի, Հայ ջանիման, ջանիման»⁴² սկսվածքով հազվագյուտ միջնադարյան ծիսական երգի ամբողջական բնագիրն ուղղակիորեն առնչվում է նախամուսնական նվիրագործմանը.

Եալալի, Հայ ջանիման, ջանիման,
Ջախտարարին ջանիման:
Պատկերրգայ աննրման,
Դէմք քո պայծառ փայլման...
Կերքընիտ մարգարիտայ,
Տասն չորս տարիդ թամամայ⁴³:

Սաղափի հետ ատամնաշարի առնչության վերաբերյալ տեղեկություններ կան նաև «Սասնա ազգագրություն»⁴⁴ ժողովածուի մեջ. «ավելին՝ սաղափին է միանում մեկ այլ բնակազմական ցուցիչ ևս՝ սաթր (կարբան)»⁴⁵.

Չգքու աղռեք, որ ես գանսեք, սաղափի կարբան նման⁴⁶:

Այս առումով պակաս ուշադրավ էջ Լոռու պատմազգագրական մարզում գրառված սիրահարների գուգերգը.

Երիտ.- Ա՛յ հայի ախչիկ, ա՛յ շահի ախչիկ,
Տանեն դուրս արի, ատամներդ տեսնեմ:
Աղջ.- Ա՛յ հայի տղա, ա՛յ շահի տղա
Վզնոց չե՛ս առել, սաղափ չե՛ս տեսել⁴⁷:

Ամենայն հավանականությամբ, վերոհիշյալ դիցաբանական պատկերացումների վերապրուկներն են ընկած ցայսօր գեղեցիկ ատամնաշարին տրվող մարգարտաշար հոմանիշի հիմքում:

«Սանսֆ խանրմ» հեքիաթում⁴⁸ «բանդանդան շան քամանթ» (դամաթ) համարվող աղջկա ձեռքից թռած կախարդական կրակից վառվում է նախ՝ շան գլուխը, ապա՝ աղջկա դիմացի ատամը: Ռչտունիքից մեզ հասած այս գիսլաշարում օձին փոխարինում է շունը և բոցավառվող կաշին պատռելով դուրս է թռչում «տրսընխինգ տարեկան ջհել րմ»: Դեպքերի բարեբախտ բերումով ամուսինը (Բաղգաղա թագավորի որդին) խորթ մորից դավված

⁴² «Սիրակարկաջ», Կալկաթա, 1830, էջ 65:

⁴³ Նույն տեղում:

⁴⁴ Վ. Պ ե տ ո յ ա ն. Սասնա ազգագրությունը. Երևան, 1965, էջ 392:

⁴⁵ В. III у м а н. Мир камня. Т. I, М., 1986, с. 60; Н. В. Б е л о в. Ы, ф. а, г, и., էջ 590:

⁴⁶ Վ. Պ ե տ ո յ ա ն. նշվ. աշխ., էջ 392:

⁴⁷ Ե. Լ ա լ ա յ ա ն. նշվ. աշխ., հ. 3, էջ 271:

⁴⁸ ԲԱ, Ե. Լալայանի ֆոնդ, FA III:3070-3089:

գեղեցկուհի կնոջը ճանաչում է իր իսկ տեղագրած սագափե ատամից («Լաճ տեսավ էն ատամ, ինչ ինքյ սաղաֆ էր տրե տեղ»)՝⁴⁹։ Խորթ մայրն իր այլանդակ աղջկա հետ ձիու պոչից կապվելով չարաչար պատժվում է։

«Սատաֆ խանում»⁵⁰ հեքիաթում թագավորի տղան սիրահետում է աղայի շոր մտած (վաճառականի հագուստի մեջ ծպտված) աղջկան և խոսող մատանու, «բոնճուխի» (մարգարիտ ու սաղափ) մոդուլթյամբ պարզում հարսնացուի ինքնությունը. «Տղեն Հ'ելավ դուր բերած մարդրտներ թողնց աղչկան ու նշանեց, գնաց օր զուր թատարուկ տեսնա, առնէ զուր կնիկն, երթա»⁵¹։ Այստեղ խոսք չկա ատամը հանելու և այն սաղափով փոխարինելու մասին, սակայն հեքիաթի «Սատաֆ խանում» վերնագիրը և այն հանգամանքը, որ թագավորի որդին իրեն փորձությունների ենթարկող հարսնացուին քանիցս կոչում է Սատաֆե խանում, մարգարիտներով ու սաղափով նշանելով ամուսնանում վերջինիս հետ, մեզ հուշում է, որ ասացողի մտքից սպրդել է ատամի օտարումը, մանավանդ որ Վան-Վասպուրականում գրառված նույնանուն հեքիաթն ամբողջությամբ պահպանում է նվիրագործման ծեսի եռամասնությունը⁵²։

Քննարկվող դիպաշարի նախորդ՝ Տուրուբերան – Մուշից հայանի տարբերակում⁵³ Սատաֆ խանումը գունային ցուցիչների (կարմիր, սև, սպիտակ հալավներ) միջոցով փորձություն է ենթարկում թագավորի որդուն, ապա մի տիկ գինի է կապում սրտին և մտնում հոր պատրաստած սնդուկը (չաքմած)։ Փորձությունը շարունակվում է լեզվակովի մակարդակում։ Թագավորի տղան «խոցում է» սնդուկից ելնող աղջկա սիրտը, սակայն պատռված գինու տիկը նվիրագործվողներին ողողում է երանությամբ (ծիսական լվացում-վերածնունդ)։

Հետաքրքիր է նկատել, որ Այրարատում գրառած «Մախոխի հեքիաթը»⁵⁴ Տուրուբերան – Հարբից պահպանված «Թիզ ու կես, դետնի Մուսես»⁵⁵ դիպաշարի փոփոխակն է՝ մի տարբերությամբ, որ առաջինում հմայական ցուցիչը մարգարիտն է, իսկ երկրորդում՝ մարջանը. «Մարջան, որ հայերեն բուստ ասեն... այլևի ի ծովէն կու հանեն քանց մարգարիտ, քանի որ ի ծովն է՝ կակուղ է, երբ հանեն ի դուրս ամրանայ»⁵⁶։

Պատմական Հայաստանի ամենամեծ լճի՝ Կապուտանի (այժմ՝ Ուրմիա) ջուրն իր մեջ պարունակում է վեց անգամ ավելի աղ, քան օվկիանոսինը։ Լճի ափերը, Լինչի ասելով, մեծ մասամբ ցածր են, աղով ներծծված, և առափնյա շերտը, ուր կարելի է գտնել քարացած կորալներ⁵⁷ ու խեցիների կտորներ, լճի կապուտության մեջ շողում է որպես սպիտակ ժապավեն⁵⁸։

⁴⁹ Նույն տեղում։

⁵⁰ ՀԺՀ, հ. 13, Երևան, 1985, էջ 354։

⁵¹ Նույն տեղում, էջ 358։

⁵² ՀԺՀ, հ. 14, էջ 513-517։

⁵³ ՀԺՀ, հ. 13, էջ 359-361։

⁵⁴ ՀԺՀ, հ. 2, էջ 354-362։

⁵⁵ ՀԺՀ, հ. 11, էջ 353-355։

⁵⁶ Ա. Դ ա լ ը ի ժ ե ց ի, էջ 456։

⁵⁷ X. Փ. Ա յ ը չ. Армения. Путевые очерки и этюды. Т. II, Тифлис, 1910, с.

55. Մարջանի՝ իբրև հարսանեկան ցանկալի նվերի մասին տես՝ Պ. Պ ո ը յ ա ն. նշվ. աղյս., էջ 520։

⁵⁸ Կորալները (մարջան) արևադարձային ջրերում ապրող ծովային մանր օրգանիզմներ են, որոնք օվկիանոսային ջրերից անջատելով կալցիում տարրը կառուցում են կենդանի-

Հին Հնդիկների դիցաբանական պատկերացումների Համաձայն կորալի (մարջան) ծառը (*Erythrina Indica*) օվկիանոսի խնոցահարվածներից ծնված «դրախտային ծառ» մանդարայի (*mandāra*) երկնային Համարժեքն է⁵⁹: Մանդարան ծառանման բույս է, որի տարատեսակները մորմաղգիների ընտանիքին պատկանող, ատրոպին պարունակող թմրախոտեր են, իսկ մարջանը բնակազմական բաղադրությամբ կենդանածին կրաքար է՝ «երբեմն ժայռոտ, երբեմն հարթ և սնկանման»⁶⁰: Ահավասիկ հայ ժողովրդական հեքիաթներից մեկում մարջանից ծնված ծառի նկարագրությունը. «Առատուն ի ախչիկ կէլնի վեր, կառնի ուր ախպեր, կէրթա էլմել էն քյեռչկ-սարի տակ, կտիսնա, որ ի նչ էրեկվան ուր մառլան խորած տեղ դյեռ մեյ խատ ծառ մի պյուսե, էլե խետ թակավորի քյեռչկ-սարի բոյին, կանաչ կազլներաց խետն էլ ճութ-ճութ կարմիր մառլան ի կախվե. ըսկուն, որ մարթու, աստծու այո՛ւր կուղյա»⁶¹:

Ուսումնասիրողները բանահյուսական նյութերով հիմնավորում են մանդարայի ծաղիկների անզգայացնող և քնաբեր հատկությունների կիրառությունը հնագույն խորհրդածեսերում նվիրագործվողին իրականությունից դիտակցման բնագանց վիճակի (տրանս) մեջ ներքաշելու նպատակով⁶²: Ժամանակի ընթացքում մթազնել է մանդարայի և մարջանի ծագումնաբանությունից առասպելական ընդհանրությունը և մանդարայի անվանափոխությունը մարջանի խնամքով քողարկել է ծիսապաշտամունքային տեղեկատվությունը: Այս և այն կողմնային աշխարհներն իրար կապող այդ թմրամիջոցը, որի չարաշահումը կարող է հասցնել կաթվածի և մահվան, միջնադարից մինչև այսօր ելուզակներն օգտագործում են իրենց գոհին բթացնելու համար⁶³: Այս ամենի արձագանքն առկա է «Թիզ ու կես, գետնի Մուսես» հեքիաթում⁶⁴:

Վերոհիշյալ հեքիաթում «հալիվորն» իր տնօրինած մարջանը հանելով կամրջի տակից՝ տրամադրում է աղջկա հորը՝ առաջադրած պայմանը խախտելու պարագայում աղջկան կնություն տանելու պահանջով: Օրգանական ծագմամբ բնակազմական այս ցուցիչի միջոցով հեքիաթում խաղարկվում են նախամոսնական և հետամոսնական փորձությունները: Ամենայն հավանականությամբ, աղջկա խնդրած մարջանի (մեկ այլ տարբե-

ների խեցիներից, գրահներից և կմախքներից բաղկացած կորալային կրաքարերի խութեր: Պլինիոս Ավագի վկայությամբ կորալն օժտված է մարդուն երջանկացնելու, չար աչքից, ֆիզիկական և հոգեկան հիվանդություններից բուժելու մոգական հատկություններով (H. B. Ե л о в. Նշվ. աշխ., էջ 247-249):

⁵⁹ Я. В. В а с и л ь к о в. Древнеиндийский вариант сюжета о «безобразной невесте» и его ритуальные связи. — "Архаический ритуал в фольклорных и раннелитературных памятниках. М., 1988, с. 103; S. M. G u p t a. Plant Myths and Traditions of India. Leiden, 1971, p. 46-47.

⁶⁰ Թ. Թ ա դ և ս յ ա ն. Քարերը և քաղաքները. Երևան, 1990, էջ 60, В. Ш у м а н. Նշվ. աշխ., էջ 60:

⁶¹ ՀԺՀ, հ. 15, Երևան, 1998, էջ 399:

⁶² Я. В. В а с и л ь к о в. Նշվ. աշխ., էջ 103; A. B a s h a m. History and Doctrines of the Ajivikas. L., 1951, p. 136.

⁶³ Т. М. С у д н и к, Т. В. Ц и в ь я н. Мак в растительном коде основного мифа. — "Балто-славянские исследования", М., 1980, с. 303; Я. В. В а с и л ь к о в. Նշվ. աշխ., էջ 103:

⁶⁴ ՀԺՀ, հ. 11, էջ 353-355:

րակում մարգարտի)⁶⁵ և ոսպի միջև մի կողմից ընկած է մոգուլթյան նմանակման օրենքի կիրառումը, մյուս կողմից՝ Մեծ պասի կերակրատեսակների մախոխի և ոսպպուրի ծիսական բովանդակությունը: Չմոռանանք նաև, որ դիցաբանական պատկերացումների համաձայն հատկազգիները խորհրդանշում են սեռազդացությունն ամուսնությունն նախապատրաստում⁶⁶: Երկու հեքիաթներում էլ հայրը «մըջան ուլնիկն» ու «մարգարտե շապիկը» տուն բերելով տնեցիներին խստորեն պատվիրում է «ոսպե շուրվա» և «մախոխ» չեփել: Եթե «Թիզ ու կես, դեստնի Մուսես» հեքիաթում «Ճժեբ կըսին — Մենք հորի՞ ոսպե շուրվա կէփինք, մենք կուտի՞նք, օր էփինք»⁶⁷, ապա «Մախոխի հեքիաթում» որոշ ժամանակ անց, «օրն էլ շաբաթապաս էր», աղջիկը մոր պատվերով «թթուն լցրեց պղնձի մեջը, սկսեց մախոխ էփել մտիցն ընկել էր»⁶⁸: Հեքիաթի երկու տարբերակում էլ «սխալմամբ» եփված ծիսապուրները (և՛ ոսպե շուրվան, և՛ մախոխը) ազդարարում են Մեծ պասի սկիզբը: Իբրև կրոնապաշտամունքային պարտք նվիրագործումը ենթադրում է գապվածության դրսևորում: Վերոհիշյալ հեքիաթներում այդ սակավապետությունն արտահայտվում է նվիրագործվողների Մեծ պասով սկսվող փորձությունների հաղթահարումով՝ մսի օգտագործման խստիվ արգելքով, ինչն ավելի է ընդգծվում հում մսի միջոցով: Ասրեն-Թոմփսոնի «ժողովրդական հեքիաթների տիպերի» AT 311 համարի ներքո գետեղված այս և նման դիպաշարերում⁶⁹ սահրբազը (կախարհ), հալիվորը, օշափը, քոսակը, արչը, դարվիչը և այլն հերթով ամուսնանում են երեք քույրերի հետ ու ստիպում նրանց ուտել մարդկային ականջը, միսը, դայլի կամ կովի հում միսը, լյարդը, եփած շան թուլան և այլն: Փորձությունը հաղթահարում է փոքր քույրը՝ դրանցով կերակրելով եղիպտական, բալթա-սլավոնական-դերմանական, ինչպես նաև հայկական հավատալիքներով պաշտամունքային կենդանի համարվող կատվին⁷⁰ և ամուսնանում թագավորի որդու հետ: «Չորս թիզ հասակ, երկու թիզ մորուք» ունեցող հալիվորը հնարամիտ կնոջը վնասելու նպատակով կերպարանափոխվում է անմեղ գառան⁷¹: Կնոջ պահանջով թագավորի որդին մորթում է գառան կերպարանք առած հալիվորին և ոսկորները թաղում հողում: Մարջանի անդրաշխարհյան համարժեքը (հալիվորի ոսկորները)⁷² ցուցիչի համար խորթ միջավայրում (հող) առաջացնում է ջերմաէներգետիկ համակարգի խախտում, ինչի պատճառով հեքիաթի հե-

⁶⁵ ՀԺՀ, հ. 2, էջ 354-362:
⁶⁶ В. А н д р е е в а. Ы з ъ . ա շ Խ . , է ղ 132:
⁶⁷ ՀԺՀ, հ. 11, էջ 353:
⁶⁸ ՀԺՀ, հ. 2, էջ 355:
⁶⁹ ՀԺՀ, հ. 5, Երևան, 1966, էջ 163-169, հ. 6, էջ 62-64, հ. 8, Երևան, 1977, էջ 314-317, հ. 9, էջ 114-118, 258-265, հ. 10, էջ 92-99, հ. 11, էջ 139-146, էԱԺ, հ. 7, Մոսկուս-Վաղարշապատ, 1902, էջ 201-208, Հայ ազգագրություն և բանահյուսություն (այսուհետև՝ ՀԱԲ), հ. 19, Երևան, 1999, էջ 61-63:
⁷⁰ Т. В. Г а м к р е л и д з е, В. В. И в а н о в. Индоевропейский язык и индоевропейцы. Тбилиси, 1984, с. 600; В. Н. Т о п о р о в. Кот. — МНМ, т. II, М., 1992, с. 11.
⁷¹ Գառան՝ իբրև զոհարեցողի հավատալիքի մասին (տե՛ս В. Н. Топоров. Овца. — МНМ, т. II, с. 237 — 238).
⁷² Հանգուցյալի ոսկորների միջոցով կենդանի մարդկանց զգոնությունը բխացնելու հոմոպատիկ (նմանակման) մոգուլթյան մասին տե՛ս Զ. Ֆրեյդի. Ոսկե ճյուղը (մոգուլթյան և կրոնի ուսումնասիրություն). Երևան, 1989, էջ 41:

րոտուհին, ոսկորներից աճած սոխը սննդի մեջ օգտագործելով, կորցնում է բանականությունն ու խենթանում:

Ժամանակակից գիտության կենսառեզոնանսային մեթոդի ակունքներում ծանրակշիռ տվյալներ կան կենդանի բնության, քարերի, ծառերի և մարդու օրգանիզմի չակրաների վերաբերյալ, որոնց բջիջներից ճառագայթված ալիքների տատանումները հանգեցնում են տվյալ կառուցվածքում խնդիրների ծագմանը: Ցանկացած հիվանդություն, տկարություն, որևէ համակարգի անկանոնություն պայմանավորված է այդ ալիքների հաճախականության փոփոխությամբ: Ահա այստեղ էլ օգնության են գալիս բնական քարերը, հանքանյութերը, որոնց էներգետիկ ներուժով վերականգնվում է հիվանդ օրգանի բջիջների տատանման ներդաշնակությունը, շտկվում մարդու խախտված կենսառեզոնանսը⁷³: Երբ ամուսինը հալիվորի ոսկորները հանում է հողից և նետում ծովը, ծագումնաբանորեն հարազատ միջավայրում ցուցիչը (մարջան) վերականգնում է իր բնական գործառույթը և հեքիաթի խենթացած հերոսուհին (խելագարությունը ժամանակավոր ծիսական մահ է) բուժվում է հաղթահարելով հետամուսնական փորձությունները, դառնալով հասարակության առավել լիարժեք անդամ: Նվիրագործման համապատասխան փուլերով անցած նրա ամուսինը ևս կորցնում է իր ընտրյալին՝ նրան գտնելով ավելի բարձր կարգավիճակում⁷⁴:

Ցուցանշական է ոչ միայն խաբեությունը ծովը նետված աղջկա արցունքների վերափոխվելը մարգարիտների («Սաղաֆյա խանում») ⁷⁵, այլև նրա բախտակցի արցունքներով ջրված մարջանի հատիկի բազմացումն ու փոխակերպումը փարթամ ծառի («Երեմեա թակավոր») ⁷⁶: Ի տարբերություն հալիվորի հողում թաղված ոսկորների՝ ինչից ծնված սոխը ևս անդրաշխարհյան խորհրդանիշ է ⁷⁷, այս վերջին հեքիաթում ⁷⁸ մարջանի այսուրաշխարհյան համարժեքը (նվիրագործվող աղջիկը) իր արցունքներով պահպանում է հորած ցուցիչի ջերմահանգեցնող հաշվեկշիռը. «Ախչիկն ի,

⁷³ I. V. German. Lithotherapy..., p. 71. Օձի ստամոքսում, գլխի մեջ աղամանդի կամ այլ թանկագին քարի հայտնաբերումը Վ. Յա. Պրոպր կապում է նվիրագործման ծեսի ժամանակ հերոսի մարմնի մեջ մտցրած լեռնային բյուրեղապակու (կվարցի) բյուրեղների հետ (В. Я. П р о п п. Исторические корни волшебной сказки. Л., 1986, с. 231 — 232): Հանքանյութերը, վաղուց ի վեր սերտորեն կապված լինելով բժշկական աստղագուշակության հետ, կվարցի բյուրեղների միջով անցնող ուլտրամանուշակագույն ճառագայթների հակասեպտիկ ազդեցության շնորհիվ, հավանաբար, ծիսապաշտամունքային գործառույթին զուգընթաց իրականացրել են նաև օրգանիզմի էներգետիկ համակարգին խթանող կենսաբանական գործառույթ (հիպերտոնիայի, գլխացավի, խոսքի խանգարումների, սրտային անբավարարության ժամանակ լեռնային բյուրեղապակին մշտապես կրել են սրտի շրջանում կամ այժմ ձեռքի դաստակին): Հետաքրքիր է մատնանշել, որ «ըստ երկրագնդի կառուցվածքի ժամանակակից մեկնակերպերից մեկի, դրա միջուկը մի խոշոր բյուրեղ է՝ գերամուր աղամանդ, որի իրար հատող նիստերի անկյունները տարածության մեջ ճառագայթում են էներգիայի վիթխարի հոսք» (I. V. German. Նշվ. աշխ., էջ 66-67):

⁷⁴ ՀԺՀ, հ. 11, էջ 355:

⁷⁵ ՀԺՀ, հ. 14, էջ 516:

⁷⁶ ՀԺՀ, հ. 15, էջ 399: Մարգարտի և մարջանի արգասավորման խորհրդանիշի մասին տե՛ս Ջ. Ֆրեդեբ. Նշվ. աշխ., էջ 44, 49, Н. В. Белов. Նշվ. աշխ., էջ 261:

⁷⁷ ՀԺՀ, հ. 11, էջ 353-355: Սոխի իբրև շուշանագգիների ընտանիքին պատկանող անդրաշխարհյան ցուցիչի մասին տե՛ս Э. Петросян. Боги и ритуалы древней Армении. Ереван, 2004, с. 220 — 221.

⁷⁸ ՀԺՀ, հ. 15, էջ 399:

կէրթա՞, կկայնի էդա ծառի տակ, քիչմ կուլա՞, կդառնա, կխառցուցի. – Մառջան, քյե վո՞վ ի տնդյե:

Ծառն ի կասի. – Քյո շող-շող մատներ:

– Մառջան, քյե վո՞վ ի ճրե:

Ծառն ի կասի. – Քյո լյուլախ աչքեր»⁷⁹:

Ակներև է մարջանի և աղջկա երկխոսութեամբ իմաստավորվող ցուցիչի և նվիրագործվողի կենսալիցքերի փոխազդեցութիւնը:

Այս, ինչպես նաև նույն դիպաշարի այլ փոփոխականներում (ցուցիչը մերթ մարջանն է, մերթ մարգարիտը) հերոսուհին հերթական փորձութիւնն է հաղթահարում անհատակ ծովում՝ ապաստան գտնելով մեծ ձկան որովայնում: Չգիտանալով աղջկա արցունքների մրմուռին՝ ձուկը նրան փսխում է ծովափին⁸⁰ (աղջկա վերածնունդը հմմտ. խեցուց մարգարտի անջաման հետ): Ուշագրավ է, որ «Երեմեա թակավոր» հեքիաթում⁸¹ նվիրագործվողը ծովափին է հայտնվում ոչ թե միայնակ, այլ նորածին որդու հետ հապացուց հետամուտնական փորձութիւնների հաղթահարման և կարգավիճակի ամրապնդման:

«Մերջանի հեքիաթում»⁸² տարիքային մի խմբից մյուսն են անցնում հայրական տնից վտարված և քարայրում ապաստան գտած թագավորի դույզ որդիներն ու եղբայրներին որոնող դուստրը: Պատահաբար կուլ տված մարջանից հղիացած թագավորի աղջիկը ծննդաբերում է առանց «ծունկը դետին տալու»՝ բերանով (կուսական ծնունդը հմմտ. մարջանի հետ), ինչն ափելի է ընդդժում բնակազմական ցուցիչի պտղաբերման հատկութիւնը: Վերոհիշյալ հեքիաթում մարջանից ծնված հերոսն իր հերթին է փորձութիւններ հաղթահարում, «Շա՛րվի մերջան, շա՛րվի» հմայախոսքի մոգութեամբ կատարում թագավորի հանձնարարութիւնը և քեռուն ամուսնացնում վերջինիս աղջկա հետ⁸³:

Ազդագրական նյութը փաստում է մայրերի համառ գիմագրութեամբ, լացուկոծով ուղեկցվող նվիրագործման ծեսերի մասին⁸⁴: Այս համատեքստում տեսանելի է դառնում Թալինում գրառված ծիսակենցաղային երգում անուշաբույր մեխակի (խրրըֆիլ) համագրութեամբ շարված «մամու ջիգար» մարջանի (տվյալ դեպքում՝ նվիրագործվողի) օտարման փուլը:

Մամու մրջան խրրըֆիլով շարուգ էր,

Մամու ջիգար՝ օդար աշխարհ գարուգ էր⁸⁵:

«Խրրըֆիլ» նաև սև թել է նշանակում⁸⁶, և եթե հավելենք սև դուլնի դերը նվիրագործման ծիսական համալիրում, ապա պատկերն առավել ամբողջական կդառնա: Կրկնվող տողերին նախորդող տրամագրութիւնը («Ես կէղնիմ հորդ փեսա», «Ուխտ ու պայման արել եմ», «Պայմաններդ

⁷⁹ Նույն տեղում:

⁸⁰ ԷԱԺ, հ. Բ, էջ 442:

⁸¹ ՀԺՀ, հ. 15, էջ 402:

⁸² ՀԺՀ, հ. 1, էջ 228-235:

⁸³ Նույն տեղում:

⁸⁴ Ա. Դրիձո, Լ. Միսց. նշվ. աշխ., էջ 83-88:

⁸⁵ Ի. Խաչատրյան. Թալին. – ՀԱԲ, հ. 19, էջ 144:

⁸⁶ Նույն տեղում, էջ 271:

պայել եմ» և այլն)⁸⁷ հուշում է նվիրագործման փուլերի հաղթահարման մասին:

Այսպիսով, համոզված կարելի է ասել, որ ծիսահամայնական միջավայրում կենսական լիցքեր պարունակող օրգանական ծագմամբ բնակազմությունները իմաստավորվել են իբրև արարողակարգված խորհրդանշային ցուցիչներ և հայ ժողովրդական հեքիաթներում ծառայել են նվիրագործման խորհրդածեսի առարկայացմանը:

ОРГАНИЧНЫЕ КОДЫ ИНИЦИАЦИИ В АРМЯНСКИХ НАРОДНЫХ СКАЗКАХ

ТАМАР АЙРАПЕТЯН

Резюме

В армянских народных сказках содержатся различные сведения о магических свойствах драгоценных металлов, камней и амулетов, которые тесно связаны с архаическим обрядом инициации. В настоящей статье исследуются до и послесвадебные инициации, связанные с магическими свойствами органических соединений, т. е. кодов (жемчуг – садаф – гахтакур, буст – коралл – марджан). Очевидно, что сюжеты армянских волшебных сказок, принадлежащих типу Аарне-Томпсон (АТ) 433, происходят от инициации. Исследуемым материалом подтверждается, что наполненные жизненным зарядом органические коды символизируют обряды инициации и в армянских народных сказках отражаются в виде фольклорного воображения.

INITIATION RITUAL NATURAL CODES IN ARMENIAN FOLK-TALES

TAMAR HAYRAPETYAN

Summary

People have known about wonderful properties of minerals since ancient times. Stones were endowed with the capability to conjure evil spirits, cure from various ailments, bring happiness and well-being. There is much information about magical properties of natural stones – pearl – sadaph – gaghtakur, bust – coral – marjan in the Armenian folk-tales, too. These stones in the tales are connected with marriage and after marriage initiation ritual of the heathen period. The material of the article affirms that subjects of Armenian folk-tales in type of Aarne-Thompson (AT) 433 are born from the initiation ritual and the natural stones appeared as symbolic codes in the tales.

⁸⁷ Նույն տեղում, էջ 144: